2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայտի հաստատման ամսաթիվը՝

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

«1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի իրականացումը բխում է՝

✓ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելվածի 82-րդ կետի 4)-րդ ենթակետի դ. պարբերությունից,

✓ Օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշման հավելված 1-ի՝ Նպատակ 2 «Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում» 2.2 «Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» մասի 2.2.2 «Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ» կետից,

✓ 2021-2026 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» կետի 4.3 «Կրթություն» մասով սահմանված՝ բարձրագույն կրթության ոլորտում ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական գրավիչ միջավայր ապահովելու համար ակադեմիական քաղաք հիմնելու ռազմավարական նպատակից,

✓ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Կրթություն» բաժնի 20-րդ՝ «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում» կետից,

✓ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգից:

2026-2028 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում «Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի հիմնական նպատակներն[1] են՝

[1] *Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունը ներկայացվում է պահանջվող ձևաչափով Հավելված 3-ի Մաս 3-ում:*

1. Ակադեմիական քաղաքի նախագծում ու կառուցում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ,

2. համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցում, պահպանում և բարելավում,

3. հետազոտությունը և ուսումը խթանող, գրավիչ, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծում՝ հաշվի առնելով ոլորտների արդի և զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության համընդհանուր մատչելիության չափանիշները,

4. մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաև ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկակամ միջավայրի ստեղծում:

Վերոնշյալ նպատակների վերջնական արդյունքի ցուցանիշներն են՝

1. Ակադեմիական քաղաք ծրագրի համակարգման և մոնիթորինգի ծառայությունների մատուցում,

2. Ակադեմիական քաղաք ծրագրի իրականացման համար միջազգային խորհրդատվական,

3. Ակադեմիական քաղաքի նախագծման և կառուցման գործընթացների ապահովում:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

«1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրում **2026-2028 թվականների համար առաջնահերթ են**[2]՝

- «Ակադեմիական քաղաքի ծրագրի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառումը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված «Ակադեմիական քաղաք» ծրագրի նախապատրաստման, իրականացման, մշտադիտարկման և կառավարման ընդհանուր համակարգման, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կանոնադրության 3-րդ կետի 16-րդ ենթակետի կատարման անհրաժեշտությունից:

- «Ակադեմիական քաղաք ծրագրի իրականացման համար միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում և պայմանագրերի սպասարկում» միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կանոնադրության 5-րդ կետի 26-րդ ենթակետից՝ համագործակցություն իրականացնելով ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ:

- «Ակադեմիական քաղաքի նախագծման, կառուցման և բովանդակային գործընթացների ապահովում» միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգի 6-րդ կետի 69-րդ ենթակետից՝ համաձայն որի «Ակադեմիական քաղաք» ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման

[2] *Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի վերոնշյալ ծախսային գերակայությունները հակիրճ շարադրված են նաև Մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 12-ով ներկայացված ձևաչափում:*

աշխատանքներ» բյուջետային ծրագրի՝ Ակադեմիական քաղաքի նախագծման ու կառուցման ուղղությամբ կապիտալ բնույթի միջոցառման ներքո:

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ և բազային բյուջեի գնահատում

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգի 6-րդ կետի 69-րդ ենթակետը և համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի ««Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 585-Ա որոշման որոշման 8-րդ կետի՝ 2026-2028 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող «1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի ***ֆինանսավորումը***[3]:

«1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի միջոցառումների իրականացման համար պետական բյուջեով հատկացված ծախսերը 2025 թվականին կազմել է **2,114,076.3 հազ. դրամ**, իսկ 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **4,966,395.7** հազ. դրամ**, 61,290,160.4** հազ. դրամ **և 275,541,342.7 հազ. դրամ, որից՝**

- «11001. Ակադեմիական քաղաքի ծրագրի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառումն ուղղված է ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **174,446.0 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին **214,880.0-ական հազ. դրամ.**
- «11002. Ակադեմիական քաղաք ծրագրի իրականացման համար միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում և պայմանագրերի սպասարկում» միջոցառումն ուղղված է միջազգային խորհրդատվական հաստատությունների հետ

[3] *Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն հայտին կից Հավելված 1-ի Ձևաչափ 1-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*

տարբեր բնույթի ծրագրերի նախապատրաստմանը, ծառայությունների ձեռքբերմանը և պայմանագրերի սպասարկմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **523,000.0 հազ. դրամ,** 2026-2028 թվականներին ևս նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **523,000.0 -ական հազ. դրամ.**

➢ «32001. Ակադեմիական քաղաքի նախագծման, կառուցման և բովանդակային գործընթացների ապահովում» միջոցառումն ուղղված է չորս ակադեմիական կլաստերներից բաղկացած քաղաքի համապատասխան ենթակառուցվածքների ապահովման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարական աշխատանքների իրականացմանը, որի համար 2025 թվականին հատկացվել է **1,416,630.3 հազ. դրամ**, 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **4,228,515.7 հազ. դրամ, 60,552,280.4 հազ. դրամ և 274,803,462.7 հազ. դրամ:**

«1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի նպատակները, թիրախային վերջնական արդյունքները և դրանց կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշների հետ ամփոփ տեսքով ներկայացված է սույն հայտին կից Հավելված 3-ի Մաս 3-ում ներկայացված աղյուսակում:

Վերոնշյալ նպատակների իրականացման համար կատարվել է գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտում՝ հիմք ընդունելով այդ ծախսերի գծով 2025 թվականի համար հաստատված պլանային ցուցանիշները: «11001. Ակադեմիական քաղաքի ծրագրի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառման գծով որպես ծախսերի փոփոխության գործոն, որն ազդել է 2026 թվականի գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների վրա, հանդիսանում է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կողմից «Տաղանդների զարգացում» նոր ծրագրի մեկնարկումը: Փոփոխվել է նաև «32001. Ակադեմիական քաղաքի նախագծման, կառուցման և բովանդակային գործընթացների ապահովում» միջոցառման գծով ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարը՝ ելնելով ՀՀ կառավարության 16.03.2023թ. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 351-Լ և

19.10.2023թ. ««Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը հաստատելու մասին» N 1802-Լ որոշումներից, ինչպես նաև Ակադեմիական քաղաքի ստեղծման համար ՇԱԽՑ-ի կատարած հաշվարկներից:

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն հայտին կից Հավելված 1-ի Ձևաչափ 1-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Գոյություն ունեցող բոլոր ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքները ներկայացված են ամփոփ տեսքով՝ սույն հայտին կից Հավելված 3-ի Մաս 4-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

3.2. Նոր նախաձեռնություններ

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսեր

2026-2028 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում «1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի միջոցառումների շրջանակում իրականացվող ծախսերի հիմքում դրված պարտավորությունները կրում են պարտադիր բնույթ, քանի որ բխում են «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքից:

Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է սույն հայտին կից կից Հավելված 1-ի ներկայացված աղյուսակում:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. ՄԻՋՈՒՂՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2026-2028 թթ. ժամանակահատվածի համար «1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները) ամփոփվել է Մեթոդաբանությանը կից՝ Հավելված 8 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն կամփոփվի 2026թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ Հավելված 10-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ / ԱՆՁՆԱԳԻՐ/

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն բնագավառի 2026 թվականի բյուջետային ծրագրի նկարագիրը /անձնագիրը/ կամփոփվի 2026թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ Հավելված 13-ում ներկայացված ձևաչափին համապատասխան: